

«ԲԱԶՄԱՎԷՊ»Ը

ԵՒ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐԸ

(ԸՍՏ ՄԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԱՐԱՄԵԱՅ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ)՝

Հայ ժողովրդի մշակութային պատմութեան նոր շրջանի ողջ ընթացքում (ԺԸ. դարի վերջերից մինչեւ մեր օրերը), հայկական պարբերական մամուլի լայն ճիւղաւորումի եւ առհասարակ հրատարակչական գործի նոյնիսկ բարձր ծաղկման պայմաններում, հնարաւոր չի եղել հիմնադրել ո՛րեւէ երաժշտական ամսագիր, եւ կամ կանոնաւոր կերպով լոյս տեսնող երաժշտագիտական տարեգիրք: Առանձին փորձեր են եղել միայն՝ Կ. Պոլսում եւ Պաքւում, որոնք տեւական յաջողութիւն չեն ունեցել²:

1. Սոյն ենթախորագրով արւում է շատ անհրաժեշտ մի վերապահութիւն: Հարցն այն է, որ «Բազմավէպ»ում 150 տարիների ընթացքում լոյս տեսած երաժշտական նիւթերի լրիւ հաշուառումը, դասակարգումն ու, ըստ այդմ, արծարծուած տարբեր խնդիրների ուսումնասիրութեան աստիճանի պարզաբանումը պահանջում է՝ յատկապէս դրան նուիրուած տեւական աշխատանքներ կատարել: Հնարաւորութիւն չունենալով դա անել ամերիկահայ գաղութի պայմաններում (որտեղ անմատչելի են «Բազմավէպ»ի բոլոր տարիների կազմած հաւաքածոները), այստեղ բաւարարւում ենք մեր ընդհանուր փորձառութեամբ կուտակուած գիտանքով, որն հիմնականում ձեռք ենք բերել 1950ական թուականների երկրորդ կէսից սկսեալ, մեր երաժշտագիտական աշխատանքներում տարբեր առիթներով «Բազմավէպ»ին դիմելու միջոցով:
2. Նկատի ունենք անցած հարիւրամեակում Կ. Պոլսում 1858-62 թուականներին Սր. Յովհաննիսեանի, Գ. Շրահեանի, ապա եւ Տ. Զուխաճեանի աշխատակցութեամբ ընդհատումներով լոյս տեսած «Քնար Հայկական» հանդէսները, որոնք երկար կեսնք չունեցան: Այնուհետեւ, Պաքւում 1910-17 թուականներին Անտոն Մայիլեանի հրատարակած (դարձեալ ընդհատումներով) «Թատրոն եւ երաժշտութիւն» հանդէսն ի մտի ունենք, որ զուտ երաժշտական էլ չէր:

Վերջինս օրինակով մի նոր ամսագիր էր ծրագրւում Հայաստանի երկրորդ հանրապետութեան գոյութեան առաջին տասնամեակներին: 1932ին հիմնադրուեց նման,

Վերջին երկուհարիւր տարիների ընթացքում գրուած երաժշտական կամ նաեւ երաժշտական նշանակութիւն ունեցող յօդուածները հրատարակուած են հայկական հարուստ պարբերական մամուլի հիւր-ընկալ էջերում: Հայ երաժիշտների ու երաժշտագէտների ուսումնասիրութիւնները ցրուած են, եւ շարունակում են ցրուել հայ (եւ ոչ միայն հայ) տարբեր թերթերում, ամսագրերում, տարեգրքերում եւ ժողովածուներում:

Հայ երաժշտագիտութիւնը, յանուն իր իսկ բնականոն զարգացման, վաղ թէ ուշ, պէտք է աշխատանքի լծի համապատասխան աղբիւրագէտների, ստեղծելու համար մեր ազգային երաժշտարուեստին վերաբերող հրատարակուած նիւթերի լիակատար մատենագիտութիւնը (bibliography), այլեւ դրանք մասնագիտօրէն բնութագրող, վերլուծող եւ ըստ արժանւոյն գնահատող հեղինակաւոր մեկնաբանութիւններից կազմուած մի մատենագիտութիւն (bibliology):

Դա մեծ ու լուրջ խնդիր է, որ պահանջում է գննել հարիւր հազարաւոր տպագիր էջեր եւ ծանօթանալ մամուլի ամենատարբեր միաւորների:

Առիթ ունեցել ենք նշելու, որ ամէն տեսակէտով չահեկան է գործնական մեր ազգային-կրօնական, արուեստի եւ գրականութեան, պատմա-բանասիրական, կամ ընդհանուր հայագիտական զանազան ամսագրերից եւ տարեգրքերից: Նաեւ կատարել ենք այդպիսի երկու փորձ, յատկապէս քննելով «Արարատ» հանդէսի հրատարակութեան յիսուն³, եւ «Էջմիածին» ամսագրի գոյութեան երեսուն տարիների ընթացքում⁴ դրանց էջերում երեւացած նիւթերն ու եկել համոզման, որ դրանք ունեն ոչ միայն պատմական արժէք (սենք՝ լոկ նոր չրջանի հայկական երաժշտա-հասարակական, հրապարակախօսական, քննադատական ու գիտական մտքի ձեւաւորման ուղիներն ըմբռնելու առումով), այլեւ որոշակի այժմէական նշանակութիւն:

Ընդհանուր առմամբ ծանօթ լինելով մեր միւս ամսագրերին եւս, կարող ենք հաւաստել, որ ասուածը ճիշտ է նաեւ դրանց, եւ մասնաւորապէս, ու առաւել եւս՝ «Բազմավէպ»ի վերաբերութեամբ: Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան հայագիտական պաշտօնաթերթը՝

բայց աւելի լայն ընդգրկումով մի ամսագիր, որ 1940-41 թուականներին անուանուեց «Որհրդային արուեստ»: 1943-55 թուականներին, այն՝ դարձաւ «Սովետական գրականութիւն եւ արուեստ»: Իսկ 1955ից՝ նոյն ամսագիրը կոչուեց «Սովետական արուեստ», որն իր էջերը տրամադրում էր երաժշտութեան ու թատրոնին, ճարտարապետութեան ու կերպարուեստին, շարժանկարին եւ այլն:

3. Տե՛ս «Արարատ»-ն ու երգ-երաժշտութեան հարցերը՝ յօդուածաշարը, «Էջմիածին», 1968, թ. 11-12, 1969, թ. 3-5, եւ 1969, թ. 12 (նոր խորագրով՝ «Արարատ»-ն Կոմիտասը):

4. Տե՛ս մեր յօդուածը՝ «Էջմիածին»-ը եւ հայ երաժշտութեան հարցերը, «Էջմիածին», 1975, թ. 2:

«Բազմավեպ»ը 150 տարի է ինչ, ահա, գործօն մասնակցութիւն է բերում երաժշտական լուսաւորութեան, եւ հայ պատմական ու տեսական երաժշտագիտութեան (այդ թւում եւ խազաբանութեան) հարցերի մշակման աշխատանքներին: Մանաւանդ 1850ական թուականների վերջերից, երբ այն՝ ամսագրի վերածուելով, իր էջերն աւելի ու աւելի է տրամադրել գրականութեանն ու արուեստին առնչուող նիւթերին:

«Բազմավեպ»ում լուսաբանուել են եւրոպական երաժշտութեան մի շարք դէմքերն ու երեւոյթները եւս⁵: Ու առաւելապէս դրանց վերաբերող գրութեանն են, որ ունեն երաժշտա-լուսաւորական բնոյթ:

Հայ երաժշտութեան նուիրուած յօդուածները բազմաթիւ ու բազմազան են ըստ բնոյթի, որով եւ ենթակայ՝ տարբեր կարգի բաժանումների ու ստորաբաժանումների: Ընդհանուր գծերով, դրանք դասակարգւում են ընթացիկ հարցեր, պատմական հարցեր, տեսական հարցեր, այդ թւում եւ գեղագիտութեան ու խազաբանութեան հետ առնչուող խնդիրներ:

Ընթացիկ հարցեր չօչափող գրութեանը տեղեկատու տիպի են ուր երբեմն ամփոփուած են լինում շատ կարեւոր փաստեր⁶: Յատկորոշ գրութիւններից է, այս տեսակէտով, «Կոմիտաս Ք. յիտալիա» տեղեկատուութիւնը⁷, որտեղ հաստատագրուած փաստերն են՝ Կոմիտասի

5. Զոր օրինակ.

- Մաղկաբաղ եւրոպական, «Բազմավեպ», 1856, 138, Երգ եղանակաց, 295, Երգ աղբատին, 349, Աղօթք:
- Երաժշտութիւն Շիփէնի (Թարգմանաբար բերուած բանաստեղծութիւն, որ բնութագրում է Եւ հանճարեղ արուեստագէտի ստեղծագործութիւնը), «Բազմավեպ», 1900, 333:
- Հայկ. Արշար, Վէրտի եւ Վակէն, իտալական եւ գերմանական դպրոցները, «Բազմավեպ», 1907, 548:
- Հ. Ղեւոնդ Տայեան, երաժշտութիւնը «Աստուածային կատակերգութեան մէջ (օգտուելով Արնալտոյ Պոնավենդուրայի «Dante e la Musica», Լիվոռնոյ, 1904, եւ Գամիլ Պելլէկի «Revue des Deux Mondes», 1903, էջ 67-86, աշխատութիւններից), եւայլն:

6. Ահա օրինակ.

- Ուսումնական հանդէս. Ներբողեան եւ Ճառք. Յերկղարեան յորելեան ծննդոց Միխիթարայ Աբբայի, «Բազմավեպ» 1876, 11 (Ներբողեան), 25 (Տաղ), 30 (Երգ):
- Բաղկեղտնի Միխիթարեան Վարժարանին թատերական եւ երաժշտական հանդէսն, «Բազմավեպ», 1894, 238:
- Հայ երգիչ մը Վենետիկ մէջ (Գրիգոր Մաքարով), «Բազմավեպ», 1908, 179:
- Բսան եւ հինգամեակ Նիկողայոս Տիգրանեանի երաժշտական գործունէութեան (ներկայ տարուան Յունիսի 1ին, Աղէքսանդրապոլում կատարուելու է երաժշտագէտ Նիկողայոս Տիգրանեանի գործունէութեան 25ամեայ յորելեանը...), «Բազմավեպ», 1914, 226:
- Հայկական նուագահանդէսը Բատուայի մէջ (ի նպաստ տեղական կարմիր խաչին), «Բազմավեպ», 1917, 327, եւայլն...:

7. Հ. Կ. Տ. Սահակեան, Հայկական երաժշտութիւն Վենետիկ (Կոմիտաս Վ. յիտալիա. նուագահանդէս եւ բանախօսութիւն Ս. Ղազարու եւ Մուրատ Ռափայէլեան վարժարանի մէջ. ուղեւորութիւն մը՝ դէպի Հայաստանի լեռները. Հայկական հարսանիքը. Պանդուխտի երգեր. կրօնական երգեր), «Բազմավեպ», 1907, 369:

գալուստը Ս. Ղազար (Շուեյցարիայից, 1907ին), նրա կարդացած տպաւորիչ դասախօսութիւնն այստեղ Հայ ժողովրդական երաժշտութեան մասին նաեւ հոգեւոր երգերի կատարումները, ինչպէս եւ նրա աշխատանքը միջնադարեան խազաւոր ձեռագրերի վրայ, վանքիս Մատենադարանում:

Ինչպէս ուրիշ փաստեր, նոյնպէս եւ սա, յատուկ նշանակութիւն է ստանում մանաւանդ այս օրերին, երբ Կոմիտասի ծննդեան 125ամեայ յորեւեանի առթիւ դարձեալ եւ դարձեալ լծոււմ ենք անգուգական երաժշտի կենսքին եւ գործունէութեան կապուած տուեալները հաւաքելու, մէկտեղելու եւ իմաստաւորելու գործին:

Պատմութեան եւ տեսութեան հարցերին վերաբերող գրութիւններն ստորաբաժանելի են ըստ բնոյթի կամ սեռի (ժանրի): Այս առումով զգալի բազմազանութիւն է նկատուում: Հանդիպում են՝ ընդգրկուն պատմական ակնարկ⁸, եւ տեսական դիտողութիւն⁹, ընդարձակ հետազոտութիւն¹⁰, եւ մէկ երգի քննութիւն¹¹, ուսումնասիրութիւն¹², եւ համառօտ տեղեկութիւն¹³, գրախօսութիւն¹⁴ եւ զրադաւանական արձագանք¹⁵, ծաւալային դիմապատկեր¹⁶, եւ նկարագրական կերպաւո-

8. Կասթուէ Ա. (Gastoué A.), բանախօսութիւն Հայ երաժշտական արուեստի պատմութեան վրայ (տրուած Փարիզի Հայ Ուսանողական Միութեան), Թարգմանեց Հ. Գ. Ոսկեան, «Բազմավէպ», 1932, 313:
9. Ն. Դ. Նշանք Հայկական երաժշտութեան (Dei segni musicali del canto Liturgico Armeno), «Բազմավէպ», 1887, 315:
10. Հ. Ղ. ԱւիճԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, «Բազմավէպ», 1872, 161, 193, 225, 257, 289, 321, 353...:
11. Հ. Յ. ԱՒԳԵՐԵԱՆ, «Փառք ի քարճումս» երգն, «Բազմավէպ», 1900, 22, 109. 1901, 25, 191: Տե՛ս նաեւ՝
- Հ. Ն. ԱՆԴՐԻԿԵԱՆ, Բնութիւն մը «Լոյս զուարթ» երգին վրայ, «Բազմավէպ», 1904, 30:
- «Եկայք հաւատացեալք» (Հմբ. Աւագ Ուրբաթու), ուսումնասիրութիւն (Հայ-Ֆրանս.) եւ ձայնագրութիւն եւրոպական խաղերով, «Բազմավէպ», 1933, 465:
12. Կ. ՏԵՐ-ԱՆՀԱԿԵԱՆ, Գողթան երգեր (երկու նոր հատակոտոր գողթան արուեստով), «Բազմավէպ», 1903, 406:
- Հ. Ն. ԱՆԴՐԻԿԵԱՆ, Դիտողութիւններ Գողթան երգերուն մասին, «Բազմավէպ», 1906, 105:
13. Երգեցողութիւնի մը Սրբոյ Պատարագին եւրոպական ձայնագրութեամբ, «Բազմավէպ», 1877, 51:
14. *La musique en Armenie*, Fr. Macler Հայագէտին երաժշտութեան վրայ: «Բազմավէպ», 1917, 230:
- Հ. ԳՐՍ. ԱՅՏԸՆԵԱՆ, «Բամ փորոտան» (գրախօսական, ջերականական, պատմական եւ քննական դիտակէտներ), «Բազմավէպ», 1919, 313, 348, 381:
- Հ. Ղ. Տ., Արամ Երեմեան. Զարմաշալի հայ ժողովրդական քամախիւսութիւնը, Վիեննա, 1923, «Բազմավէպ», 1924, 279:
15. Թ. ՔԻՒՐՏԵԱՆ, Նախապետ Գուշակի կամ «Հայրէն»ներու բուրաստումն առջեւ, «Բազմավէպ», 1930, 518:
16. ԹՈՎ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՔՐ. Կարա-Մուրզա, «Բազմավէպ», 1902, 418:
- Հ. Ն. ՏԻՐԱՑՈՒԵԱՆ, Յարութիւն Սիմանեան (կենսքը եւ գործերը), «Բազմավէպ», 1904, 72:

րումներ¹⁷, ուրուանկարային դիմագիծ¹⁸, մանրակերտ դիմանկար¹⁹, եւայլն:

Մէկ հայեացքով ընդգրկելով «Բազմավէպ»ում հրատարակուած մեզ հետաքրքրող նիւթերը, կարող ենք հաստատել, որ դրանք լոյս են սփռում Հին ու միջնադարեան եւ նոր շրջանի հայ աշխարհիկ ու հոգեւոր երաժշտարուեստների շատ կողմերի վրայ:

Համառօտ անդրադառնալով նոր շրջանին, միջնադարը մեր ժամանակների հետ կամրջող կարեւորագոյն շրջանին (երաժշտութեան առմամբ), եւ բուն միջնադարին վերաբերող յօդուածներին:

Նոր շրջանի վերաբերութեամբ պէտք է ասել, որ «Բազմավէպ»ը արտացոլել է ոչ միայն Հայ Սփիւռքի, այլեւ, որոշ չափով, Հայաստանի երաժշտական իրականութիւնը եւս, հակառակ երկրորդ հանրապետութեան գոյութեան յատկապէս առաջին տասնամեակների ընթացքում ստեղծուած արհեստական պատնէշներին: Հնարաւորութիւն չունենալով ուղղակի Հայաստանի երաժշտագէտներից ստանալու համապատասխան յօդուածներ, «Բազմավէպ»ը մտահել է մեր բանիմաց ու երաժշտարուեստի հարցերին մօտիկ կանգնած բանասէրներից մէկին՝ Արամ Երեմեանին, եւ նրանից տպել մի շարք նիւթեր, որոնցում ներկայացուած են՝ հայ երաժշտութեան մեծերից Ալ. Սպենդիարեանը²⁰, անգերազանցելի ռոմանսների հեղինակ Ռ. Մելիքեանը²¹, Ա. Տիգրանեանը եւ այլք:

20-30ական թուականներին հայ երաժշտարուեստն արդէն դուրս էր եկել՝ եւրոպական չափանիշներով սահմանուող զարգացման ուղին: Բոլորն պայքարները ետեւում էին մնացել, բայց արձագանգում էին դեռեւս աւագ սերնդի յիշողութեան մէջ: Այդ պայքարները ծաւալում էին տակաւին ներկայ հարիւրամեակի սկզբներից նոյնիսկ մինչեւ Առաջին աշխարհամարտի տարիները: Եւ դրան անդրադարձել է

- Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ, Գերպ. Կիրեղեան Արքեպիսկոպոս եւ հայ եկեղեցական երաժշտութիւնը (Հ. Լիւթմանեանի աշակերտելը, Հիւրմիւզեան դպրոցին պատկանիլը, չքեղ ձայնը, անգուգական երգիչը, շարականի եւ ժամադրքի իր հրատարակութիւնները, գիտական արտադրանքը), «Բազմավէպ», 1922, 371:

- Հ. Մ. Զ., Գուրգէն Ալեմշահ (կենսագրական գիծեր, գործերը, մարդը եւ երաժիշտը), «Բազմավէպ», 1948, 26:

17. Հ. ՆԵՐՍԷՍ, Գեորգ Սիմանեան (շուքակահար), «Բազմավէպ», 1922, 371. 1923, 28:

18. Հայ երաժիշտ մը (Թաւրութական հար Տիրան Պէյ Ալեքսանեանի մասին՝ The Levant Herald and Eastern Express-ում արտայայտուած ուշագրաւ կարծիքների մէջընթացումով), «Բազմավէպ», 1900, 225:

19. Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, Յայտնի շուքակահար Յ. Նալբանդեան, «Բազմավէպ», 1908, 376:

- Յ. Գ., Ստեփան Էլմաս, «Բազմավէպ», 1925, 376:

20. Ա. ԵՐԵՄԵԱՆ, Հայ նորագոյն կոմպոզիտորներ (20րդ դ.), Ալ. Սպենդիարեան, «Բազմավէպ», 1925, 241:

21. Նոյնի՝ Թ. Մելիքեան, «Բազմավէպ», 1925, 311, 378 եւայլն:

նաեւ «Բազմավէպ»ում Հայր Պոտուրեանը, «Հայկական երաժշտութիւն» փաստալից յօդուածով²²:

Գիտենք, որ յիշեալ պայքարները խոչընդոտներ բարձրացնում նոյնիսկ Կոմիտասի ճանապարհին²³: Բայց դրանք առաւել սուր բնոյթ էին կրում Տ. Զուխանեասնի օրերին. երբ քննուում էին Հայկական, ընդհանուր արեւելեան ու եւրոպական հիմնարան ձայնասանդուղների տարբերութիւնները եւ ազգային ձայնեղանակների (modes) ելեւէջային առանձնայատկութիւնները. երբ, բոլորին գումարած, վրայ էին հասնում Հայ մեծ կոմպոզիտորի եւ Յ. Վարդուկեանի թատերախմբերի հակամարտութիւնները եւ երբ, Յ. Պարոնեանը եւս բռնելով վերջինիս կողմը, իր «Թատրոն»ում խնդրոյ առարկայ էր դարձնում անգամ առհասարակ երաժշտարուեստում արեւելեան եւ արեւմտեան տարրերի համաձուլման հեռանկարային հնարաւորութիւնները²⁴:

Մի քանի տասնամեակ այս ամէնի շուրջ բորբոքուած կրքերով էր յագեցնում Հայ երաժշտա-մշակութային կեանքը, երբ, անցած դարավերջին «Բազմավէպ»ում երեւաց Հայր Երեմեանի նշանակալի յօդուածը, նուիրուած Տ. Զուխանեանին, որի վերնագիրն իսկ դիպուկ բնորոշ էր, տրուած մեծատաղանդ ստեղծագործողին²⁵:

Յիրաւի, լինելով առաջին արեւելցի կոմպոզիտորը, որ մասնազիտական բարձրագոյն կրթութիւն էր ստացել Միլանում, Զուխանեանը մեծագոյն յաջողութեամբ նախաձեռնել է Արեւելքի եւ Արեւմուտքի երաժշտարուեստների մերձեցման գործը, եւրոպական դասական ձեւերը վերստեղծելով արեւելեան երաժշտութեան ելեւէջային - կշռութային ինքնատիպ կերտուածքի հմուտ ներհիւսմամբ:

Որպէս Հայ արուեստագէտ, Զուխանեանը նոր շրջանի մեր առաջին մեծ կոմպոզիտորն է, ստեղծագործական հարուստ ժառանգութեամբ՝ Հայկական կոմպոզիտորական նոր դպրոցի կարկառուն հիմնադիրներից մէկը, բազմաբեղուն գործունէութեամբ՝ Հայ իրականութեանց

22. Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ, Հայկական երաժշտութիւն (բանակօրը հրապարակին վրայ. եռաձայն. Հայկական նօթայ. օրկան. նախնեաց երգեցողութիւնը. խաղերը եւ խաղերուն ծագումը), «Բազմավէպ», 1906, 318:

23. Յիշենք, օրինակ, եկեղեցական եղանակները աշխարհիկ բեմ հանելու, այլեւ դրանք ձայնասկաւառակների վրայ ձայնագրելու կոմիտասեան բեղմնաւոր ջանքերի դէմ ուղղուած գործողութիւնների ողջ պատմութիւնը, որ տեւեց 1910ից մինչեւ 1914ը, եւ որի կապակցութեամբ Կոմիտասը ցաւի սիրտ ասում էր «Ազատամարտ»ի թղթակցին. «Ես տարիներու աշխատանքով չիներ եմ իմ ուղեգիրը, ուրկէ ընթացել եմ մինչեւ ցարդ եւ պիտի ընթանամ ասկէ ետքն ալ, որքան ատեն որ ոյժ զգամ երակներուս մէջ. ոչ մէկ խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելութեանս մէջ, որուն նուիրականութեանը համոզուած եմ ես բոլորս սրտովս»: Տե՛ս ԿՈՄԻՏԱՍ, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Երևան, 1940, էջ 198:

24. Տե՛ս մեր աշխատութիւնը՝ Տիգրամ Զուխանեան (կեանքը), «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1994, էջ 145:

25. ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս., Հայ Վերդիմ, «Բազմավէպ», 1899, 81:

արեւելեան երգ ու նուագի հին, աւատատիրական, իրենց դարն ապրած ու քարացած ձեւերի ճակատագրականօրէն երկար տեւած միահեծան տիրապետութեան շրջանում եւրոպական մշակոյթը եւ երաժշտա-հասարակական կեանքի ու երաժշտական կրթութեան կազմակերպման եւրոպական սկզբունքները ժողովրդականացնող՝ պոլսահայ մի ամբողջ առաջադէմ երաժիշտների նահապետը:

Առհասարակ, Չուխաճեանն այսօր էլ տակաւին մինչեւ վերջ հասկացուած հեղինակ չէ: Դեռեւս համակողմանի կերպով ուսումնասիրուած չեն նրա օրգանական, եւ հայ իրականութեան համար ուղղակի փրկարար, կապերը արեւմտեան երաժշտութեան, ֆրանսիական երաժշտական կատակերգութեան, իտալական հռչակուած դպրոցի եւ Վերտիի օբերային անմահ արուեստի հետ: Դեռեւս սպառնիչ կերպով մեկնաբանուած չէ այն իրողութիւնը, որ Չուխաճեանն ըստ էութեան հասակ առաւ, Risorgimentoի հսկայ մաէսթրօյի օրինակով, որպէս գեղադիտական առաջադէմ գաղափարներէ տէր, ներքին հրայրքով լեցուն, ազատատենջ եւ արիասիրտ քաղաքացի-արուեստագէտ:

Իսկ Հայր Երեմեանը անցած դարի վերջին, երկու խորիմաստ խօսքով բնութագրել է Չուխաճեանին, նրան իրաւացիօրէն անուանելով «Հայ Վերտին»²⁶, եւ ըստ այդ զարգացնելով իր մտքերը: Հայր Երեմեանի յօդուածից է, որ տեղեկանում ենք նաեւ, թէ Չուխաճեանը մահից (1898) անմիջապէս առաջ աշխատել է «Յմիչճիւր» (Սրգա-վաճառներ) երաժշտա-թատերական անաւարտ մնացած գործի (հաւանաբար՝ երաժշտական կատակերգութեան) վրայ, եւ թէ Ձմիւռնիայում կատարուած եռաձայն «Հայր մեր»ը եղել է նրա վերջին յօրինումներից մէկը:

Մտորելով հին ու միջնադարեան միաձայնութիւնից դէպի արդի բազմաձայնութիւնը բերող ուղիների շուրջ, անհնարին է չյիշատակել Հայր Էդ. Հիւրմիւզեանի յօդուածներից՝ Համբարձում Լիմոնճեանին նուիրուածը²⁷, որում խօսուում է եկեղեցական մեծ երաժշտի եւ նրա ստեղծած հայկական ձայնագրութեան նոր համակարգի մասին:

Ինչպէս գիտենք, այդ համակարգը, որի յայտնութեամբ եւ գործադրութեամբ սկսուեց հայ եկեղեցական երաժշտութեան պատմական զարգացման նոր շրջանի վերածնունդը, եւ որի նշանների օգնութեամբ հաստատագրուեցին հայկական աշխարհիկ եւ հոգեւոր բազմաշարիւր երգեր, մեր ազգային երաժշտական կեանքում ապահովեց այս կամ այն չափով սահուն անցումը միջնադարեան խաղաղների դրութիւնից դէպի

26. Ի դէպ, նոյնպիսի վերնագրի՝ Le Verdi Armeno, մէկ էլ հանդիպում ենք՝ 1909 թ.-ի Փետրուարին, հիւսիսային Իտալիայի Բոլոնիա քաղաքում լոյս տեսնող L'Avvenire d'Italia (Իտալիայի ապագան) թերթում հրապարակուած հայասէր Կոմ Թիգարտոյ տեյլա Թորրէի հիանալի յօդուածում:

27. ՀԻԻՐՄԻՋԵԱՆ Զ. ԵՒ., Տիրացու Համբարձում, «Բազմամէլ», 1873, 52:

արդի գծային (եւրոպական) նօթագրութիւնը, որով հնարաւոր եղաւ զարգացնել բազմաձայնութիւնը: Եւ Հայր Հիւրմիւզեանի յօդուածը գրուած է այս հարցի յստակ գիտակցութեամբ:

Հայ երաժշտութեան հարցերով մասնագիտօրէն հետաքրքրուած ընթերցողի համար առաջնակարգ կարեւորութիւն ունեն «Բազմավէպ»-ում հրատարակուած բազմաթիւ ու բազմապիսի միջնադարագիտական նիւթերը: Դրանք բաժանուած են երկու հիմնական խմբի, որոնք են, նախ՝ երաժշտական, եւ երկրորդ՝ նաեւ երաժշտական նշանակութիւն ունեցող գրուածքները:

Նպաստակայարմար է քննութիւնն սկսել երկրորդ խմբին պատկանող գրութիւններէից:

Վերջիններս, հայագիտական այն յօդուածներն են, որոնք մեր հին ու միջնադարեան երաժշտական մշակոյթին ուղղակիօրէն վերաբերող փաստերի ու երաժշտական (ձայնագրուած) նիւթերի նուազութեան պայմաններում, հայ երաժշտագիտութեան համար ձեռք են բերում թէեւ օժանդակ, սակայն կարեւորագոյն տուեալներէի նշանակութիւն:

Յիրաւի, հայ երաժշտական մշակոյթի խոր անցեալին վերաբերող մեր գիտելիքները մենք հիմնականում քաղում ենք մեր միջնադարեան պատմիչների, իմաստասէրների, քերականագէտների, թուաբանագէտների, տոմարագէտների եւ ա՛յլ մատենագիրների աշխատութիւններից. ինչպէս եւ արդի լեզուագիտութեան, բանագիտութեան, ազգագրութեան, բանասիրութեան, պատմագիտութեան, զրականագիտութեան, կրօնագիտութեան, եւ առհասարակ մշակութականութեան հետ առընչող ուսումնասիրութիւններից ու հետազոտութիւններից:

Այս տեսակէտով հայ երաժշտագիտութեան համար մեծապէս շահեկան են եղել եւ են՝ «Բազմավէպ»-ում տպագրուած յօդուածներից՝ հայկական դիցաբանութեան²⁸ եւ վիպասանութեան²⁹, բանագիտութեան³⁰, քերականագիտութեան³¹, թարգմանական զրականու-

28. Տե՛ս Արա Ֆուլգիական դիցաբանութեան մէջ, «Բազմավէպ», 1908, 408:

29. Ազգային վիպասանութիւն, «Բազմավէպ», 1850, 356. 1851. 6:

– Արա Գեղեցիկ, Պատմութիւն վիպասանական, «Բազմավէպ», 1875, 25, 107, 250, 349. 1876, 120, 206. 1877, 31, 117, 221, 303. 1878, 11:

– Արտաւազդայ շրթայից առասպելք, «Բազմավէպ», 1877, 276:

30. Տե՛ս Բալուի անէմֆմեր եւ օրիմէմեր, «Բազմավէպ», 1902, 479:

– Զիթ-Ունի Տ., էջ մը Սասմաց Տունէն (Կարկառի բարբառող), Սամասար եւ Բաղդասար, «Բազմավէպ», 1929, 49–52:

– Առակք (Մաղկաբաղ), «Բազմավէպ», 1887, 17:

– Տե՛ս նաեւ զանազան սովորոյթների մասին Համբարձման տօնին հանդէպ Մուշ գաւառի մէջ, «Բազմավէպ», 1868, 129:

– Համդէս հարսանեաց Մուշ գաւառի մէջ, «Բազմավէպ», 1867, 507:

– Նոր տարւոյ սովորութիւն (Կաղանդ), «Բազմավէպ», 1848, 4:

31. Տե՛ս Սկիզբն հայկական լեզուին եւ Դիոնիսիոսի Թրակացոյ Գերականութիւն, «Բազմավէպ», 1877, 97:

թեան³², եւ ձեռագրագիտութեան³³, եւ գրականագիտութեան³⁴ վերաբերող նիւթերը, աշխարհիկ ու հոգեւոր այլազան երգերի գրական ընագրերը, ծանօթութիւններով հանդերձ:

Առաջ բերուած հոգեւոր ստեղծագործութիւնները տարբեր տեսակի են. զուտ եկեղեցական (պաշտամունքային), ինչպէս՝ շարական³⁵, տաղ³⁶, մեղեդի³⁷, ընդարձակ իմաստով հոգեւոր (ո՛չ անպայման պաշտամունքային)³⁸, եւ վերջապէս՝ աշխարհիկ ու հոգեւոր ականդոյթների ներհիւսմամբ յօրինուած երգեր³⁹: Աշխարհիկ ստեղծագործութիւնները նոյնպէս բազմազան են, տարածուած են՝ հին ժողովրդական կամ դամկական երգերից⁴⁰, Գուսանա-աշուղական յօրինումների վրայով⁴¹ մինչեւ նոր շրջանի ազգային հայրենասիրական ստեղծագործութիւնները⁴²:

32. Խորհրդածութիւնի Սաղմոսաց գրոց թարգմանութեան վրայ, «Բազմավէպ», 1889, 202:
- Յաղագս թարգմանութեան Աստուածաշունչ տառից ի հայ լեզու, «Բազմավէպ», 1850, 212. 1851, 230:
33. Մեր ազգին հին ձեռագրաց վրայ համառօտ տեղեկութիւն, «Բազմավէպ», 1847, 200:
34. Հ. Կ. Տէր-ՍԱՀԱԿԵԱՆ, Ազգային հին քանատեղծութեանց տաղաչափական գաղտնիքը, «Բազմավէպ», 1907, 245:
- ԱԹՃԵԱՆ Հ. Լ., Ազգային եկեղեցական քանատեղծութեան պատմական զարգացումը, «Բազմավէպ», 1914, 8, 127, 215, 331, 374, 468, 472...:
- Առնակ, Կուսիմահայ տաղասացներ, «Բազմավէպ», 1923, 170, 230:
Այստեղ պէտք է նշել նաեւ, մասնաւորապէս, շարականագիտական յօդուածները:
- ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., Նորագիտ պարականոն շարականներ, «Բազմավէպ», 1968, 211:
- ՃԵՄՃԵՄԵԱՆ Հ. Ս., Շմորիալի շարականներու հարագատութեան հարցը ձեռագիրներու լոյսին տակ, «Բազմավէպ», 1973, 362. 1974, 86:
35. Տե՛ս Շարական համդերձ օրհներոյ հարսանեաց, «Բազմավէպ», 1882, 319:
36. Տաղ նմշման Աստուածածնին, «Բազմավէպ», 1849, 246:
- Տաղ Վարդապետին, «Բազմավէպ», 1864, 234 եւայլն, այդ թւում եւ հետեւեալ հազուագիտ գործը.
- Վարդանայ Հայկազմի Տաղ գերեզմանական վասն փոխման Գրիգորի Վկայասիրի, «Բազմավէպ», 1873, 264:
37. Մեղեդի ապաշխարութեան, «Բազմավէպ», 1864, 74 (տե՛ս նաեւ՝ Մեղեդի Խաչին, 1864, 293, Մննդեան, 1864, 107, Յարութեան, նոյն տեղը):
38. Տե՛ս դարձեալ՝ չափազանց հազուագիտ միջնադարեան մի գործ՝ «Անեցի Վարդանայ Վարդապետի երգերի վասն Կառացն Աստուածութեան ներբող, «Բազմավէպ», 1919, 164:
39. Երգ ի Ս. Աստուածածնին եւ ի Գարրիէլ հրեշտակապետն, յօրինեալ ի վարդն եւ ի պալովն, «Բազմավէպ», 1865, 266:
- Երգ ի լուսամորոգն Միսիթար, «Բազմավէպ», 1876, 30:
40. Տե՛ս Երգ սիրելոյ (հին բնար), «Բազմավէպ», 1884, 34: Նաեւ՝ Ազգային դամկական երգ, «Բազմավէպ», 1853, 212: Նաեւ՝ Ռամկական երգեր, նոյն տեղում, 1845, 109 եւայլն:
41. Ակրուոյ երկրաշարժին վրայ Աղբար Աղամին յանպատրաստից երգածը, «Բազմավէպ», 1849, 119:
42. Տե՛ս Հ. ԱԼԻՇԱՆԻ նշանաւոր Պալովն Աւարայրի, «Բազմավէպ», 1847, 295: Նաեւ՝ Մ. ՓՇԵՆԻԹԱՇԼԵԱՆԻ անկրկնելի Եղբայր եմ մեքը, եւ այս՝ նոյնիսկ եղանակի ձայնագրութեամբ հանդերձ, «Բազմավէպ», 1876, 218:

Յիշատակութեան արժանի են ընդհանուր արուեստաբանական գրուածքները եւս: Միջնադարեան Հայաստանում ընդունուած բարձրագոյն կրթութեան՝ իր ժամանակի չափանիշերով առաջաւոր մի ծրագրի համաձայն համալսարաններում դաստանդուել, մասնաւորապէս, «Շօթ ազատ արուեստներ»ը (Septem artes liberales): Ինչպէս Արեւմուտքում, Հայաստանում եւս դրանք բաժանուած են եղ «Եռեակ» (Trivium) եւ «Քառեակ» (Quadrivium) դասընթացների: Առաջինն ամփոփել է՝ քերականութիւնը, ճարտասանութիւնը եւ տրամաբանութիւնը: Երկրորդի մէջ մտել են՝ տեսական թուաբանութիւնը, երաժշտագիտութիւնը, երկրաչափութիւնն ու աստղաբաշխութիւնը⁴³, որոնք համարուել են իւրովի միաւորուած՝ դրանցում քանակի ստորոգուութեան ունեցած վճռական դերով⁴⁴:

Ասուածի լոյսի տակ զարմանալի պէտք է թուի եթէ նշենք, հետեւեալը. վաղ միջնադարեան Հայաստանում հնչականութեան (acoustics) եւ ձայների յարաբերութեան մասին ուսմունքի բովանդակութիւնը պարզելիս⁴⁵, մեզ հարկ եղաւ օգտագործել նաեւ «Բազմավէպ»ում հրատարակուած յօդուածներից Ճէվհահրճեանի ուսումնասիրութիւնը⁴⁶, որում փորձ է արուում բացատրել՝ հայ ճարտարապետութեան մէջ ընդունուած ներդաշնակութեան կանոնները:

Եթէ ճարտարապետութեան վերաբերող գրուածքն օգտակար է լինում հայ երաժշտագիտութեան, ապա առաւել եւս՝ միջնադարեան դէմքերի ուրուագծման, հայոց պատմութեան տարբեր շրջանների բնութագրման⁴⁷, ինչպէս եւ հարեւան ժողովուրդների հետ հայերի

43. Հմմտ. մեր յօդուածը՝ Գլաճորի համալսարանի դերը հայկական միջնադարեան մասնագիտացուած երաժշտութեան զարգացման մէջ, «Էջմիածին», 1986, թ. 11-12, էջ 100-105:

44. Տե՛ս մեր յօդուածը՝ Դաւիթ Անյաթը եւ հայ երաժշտութիւնը, «Սովետական մուզիկա», Մոսկուա, թ. 8 (ռուսերէն):

45. Տե՛ս մեր յօդուածը՝ Մի էջ հայկական վաղ միջնադարեան երաժշտութիւնից, «Բանբեր Մատենադարանի», հտ. 5, Երեւան, 1960, էջ 64:

46. Ճէվհահրճեան Ս., Հայկական ճարտարապետութեան մէջ մերձաշնակութեան կանոններու պրպտումի փորձ, «Բազմավէպ», 1947, 108:

47. Սրանց շարքում ուշադրաւ են՝ հայ ժողովուրդի ծագումը, քրիստոնէութեան տարածումը, Կիլիկիայի հայկական պետութեան հաստատումը եւ այլ երեւոյթներ լուսաբանող արդի տուեալների լոյսի տակ իսկ նորովի արժէւորուող այնպիսի գրուածքներ, ինչպիսիք են.

- Քրիստոսէ Բաբ Գար առաջ՝ Թորգոմ, «Բազմավէպ», 1850, 224:

- Քսան եւ Իիմզ Գար մախ Բան զՔրիստոս, Հայկ, «Բազմավէպ», 1850, 288:

- Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Արշալոյս քրիստոնէութեան հայոց, «Բազմավէպ», 1900, 193, 245, 289, 340, 401, 438, 536:

- Հ. ՂԵՒՈՆԴԻ ԱԼԻՇԱՆ, Համառոտութիւն Սիսուամայ, «Բազմավէպ», 1885, 529. 1886, 87:

ունեցած մշակութային փոխյարաբերությունների յստակեցման նուիրունաժ նիւթերը⁴⁸ :

Հին ու միջնադարեան հայ հեղինակների մի զգալի մասը՝ սկսած Ս. Գրիգոր Լուսավորչից մինչեւ Մխիթար վարդապետ Սեբաստացին եւ նոյնիսկ աւելի նոր դէմքեր, սկզբունքորէն դատելով, գտնուում են երաժշտագիտութեան կալուածքի մէջ եւս : Որով քիչ է ասելը, թէ շահեկան են նրանց վերաբերող գրութիւնները⁴⁹ : Վերջիններս տարբեր բնոյթի են . ընդարձակ հետազոտութիւն⁵⁰, գեղագիտական հայեացքների վերլուծութիւն⁵¹, ստեղծագործութիւնների (այդ թւում երաժշտա-բանաստեղծական երկերի) քննական տեսութիւն⁵², դիմապատկերի ուրուագծում⁵³ :

«Բազմավէպ»ում հանդէս եկած հայագէտների շարքում երաժշտութեան նկատմամբ իրենց ունեցած շահագրգռուած վերաբերմունքով առանձնանում են նախ իրենք՝ Մխիթարեան Հայրերը, որոնք

48. Այդպիսի յարաբերութիւններ ենթադրող մի ուսանելի էջ բացեց Հ. Տիրոյեանը՝ հայկական եւ ասորական տաղաչափութեան հարցերին նուիրուած իր յօդուածով : Տե՛ս Հ. Ա. ՏԻՌՈՅԵԱՆ, Ասորական եւ հայկական տաղաչափութիւն, «Բազմավէպ», 1899, 345 :

49. Ընդհանրապէս յիշատակելի են նաեւ այն յօդուածները, որոնցում քննուում է հայ հին ու միջնադարեան մշակոյթին ու օտար հեղինակների ստեղծագործութիւնը : Տե՛ս օրինակ՝ Ս. Բարսեղ եւ իր երկասիրութիւնք, «Բազմավէպ», 1873, 112 :

50. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, «Բազմավէպ», 1872, 161, 193, 225, 257, 289, 321, 353 եւայլն : Մէկ տարի անց աշխատութիւնը լոյս տեսաւ առանձին գրքով (Վենետիկ, 1873) :

51. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Յովհաննէս Սարկաւազ Վարդապետ, «Բազմավէպ», 1847, 214 : Այստեղ է, որ Հ. Ալիշան, հայագիտութեան մէջ առաջին անգամ, տալիս է վարդապետի «Բան իմաստութեան» հազուագիւտ քերթուածի խոր վերլուծութիւնը, որում բարձրացուում է արուեստի, եւ մասնաւորապէս երաժշտութեան՝ բնութեան նմանողութեամբ զարգանալու մասին միջնադարեան գեղագիտական ուշագրաւ տեսութիւնը : Հմտ.՝ նաեւ մեր յօդուածը՝ Յովհաննէս Սարկաւազ իմաստասէրը եւ հայ միջնադարեան երաժշտական մշակոյթը, «Բազմավէպ», 1978, 328-356 :

52. Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, Տեսութիւն Յովհաննէս Մանդակունոյ եւ մորա երկասիրութեանց վրայ, «Բազմավէպ», 1890, 241 :

53. Այստեղ կարող էինք մի մեծ շարք առաջ բերել : Բաւարարուում ենք Դ-ժէ դարերին ընդգրկող համառօտ ցանկով :

- Ներսէս (Մեծն) Պարթեւ, «Բազմավէպ», 1877, 519 :

- Սովսէս Խորենացի, «Բազմավէպ», 1849, 51 :

- Գրիգոր Նարեկացի եւ Գրուածք մորա, «Բազմավէպ», 1874, 244 :

- Ներսէս Լամբրոնացի, «Բազմավէպ», 1846, 21. 1874, 241 :

- Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ, Յովհաննէս Երզնկացի (քանաստեղծը), «Բազմավէպ», 1906, 256, 347 :

- Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ, Միջին դարու հայ քանաստեղծութիւնը, «Բազմավէպ», 1905, 448 (Յովհաննէս Թլկուրամցի), 491, 500, 556 (Գրիգորիս Աղթամարցի), 546 (Մկրտիչ Նաղաշ) :

- Ղումկիանոս Երգիչ Կարնեցի, «Բազմավէպ», 1883, 97 :

այս առումով եւս շարունակել են Մխիթար Սեբաստացու հաստատած աւանդոյթները⁵⁴, եւ մասնաւորաբար, այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Հ. Ղ. Ալիշանը⁵⁵, Հ. Ղ. Տայեանը, Հ. Իգն. Կիւրեղեանը, Հ. Վ. Հացունին⁵⁶ եւ ուրիշներ: Յատկապէս Հ. Ալիշանը անգամ զարգացման նոր հորիզոններ պարզեց հայ երաժշտագիտութեան առջեւ, նախաբրիտանական Հայաստանի երաժշտութեան եւ հայ ժողովրդական (ռամական) երգի քննութեան, վաղ աւատատիրական մշակոյթի հետազոտութեան, Ներսէս Շնորհալու երաժշտա-բանաստեղծական վաստակի, Յովհաննէս Սարկաւազ վարդապետի ժառանգութեան, եւ այլ դէմքերի ու երեւոյթների գիտական ուսումնասիրութեան տեսակէտով:

«Բազմավէպ»ում լոյս տեսած նիւթերի վերը նշուած առաջին խումբը ներկայացնող յօդուածներն ուղղակի վերաբերում են հայ միջնադարեան երաժշտութեան հարցերին: Դրանցից այստեղ նպատակայարմար է առանձնացնել Հայաստանում կիրառուած նուազարանները, հոգեւոր երաժշտութեան ձայնեղանակներն ու խազազրերի համակարգը չօշափող գրուածքները:

54. Հմմտ. մեր յօդուածը՝ Մխիթար Սեբաստացիի եւ վերանորոգութեամբ շարժումը հայ հոգեւոր երգարուեստում, «Բազմավէպ», 1977, 205-214:

55. Դա մինչեւ վերջ հասկանում ենք, երբ նկատի ենք առնում այդ գիտնականների ժառանգութիւնն առհասարակ, եւ կամ գլխաւոր աշխատութիւններից գտնէ մի քանիսը: Ասենք, Հ. Ալիշանի գործերից (բացի յիշատակածներից)՝ նաեւ «հայոց երգի ուսմկական»ը (Վենետիկ, 1852), «Հայապատում»ը (Վենետիկ, 1901), «Թուշկիկ հայրեմեաց հայոց»ը (Ա.-Բ, Վենետիկ, 1921): Այլեւս կանգ չենք առնում նրա անտիպ գրութիւնների վրայ: Դրանցից «Հայաստան» ձեռագիր ժողովածուն մի կարճ ժամանակի համար մատչելի դարձաւ մեզ վերջերս շնորհիւ Հ. Սահակ Վրդ. Ծնածեմեանի բարեհաճ վերաբերմունքի: Շտապով թերթելով այն, առիթ ունեցանք նշելու մեր տետրում՝ «Տաւիղ - երկաղի, երկլարի» միջնադարեան տեղեկութիւնը, որ վաղուց փնտրում էինք Մաշտոցի անուան Մատենադարանի գրչագրերում, բայց չէինք գտնում:

56. Հ. Վ. Հացունու՝ մեզ անմիջաբար հետաքրքրող աշխատութիւններին անդրադառնալու ենք ստորեւ: Բայց հաւաստենք, որ նրա ժառանգութիւնը եւս (ինչպէս Հ. Ղ. Տայեանի կատարած գործը), ամբողջապէս առած: Ներառեալ նաեւ անտիպ գրուածքները, որոնցից, դարձեալ, Հ. Սահակ Վրդ. Ծնածեմեանի սիրալիր թոյլտուութեամբ, Թեթեակի ծանօթացանք ձեռագիր «Միսական բառարան»ին: Դրանում մեր ուշադրութիւնը գրաւեցին մեքենագիր երկու էջեր՝ «Բարեձեւութիւն ժամերգութեանց» խորագրով:

Դիտնականն իրաւացիօրէն առաջարկում է վերադառնալ ժամերգութեանց նախաւոր պարզ եւ անծանրաբեռն վիճակին, հրաժարուելով ուշ միջնադարում կատարուած անտեղի յաւելումներից (ինչպէս օրինակ՝ Օրհնութիւնների երկար քաղուածքներից): Այստեղ միայն մտորելու առիթ է տալիս հեղինակի այն պնդումը, թէ «... արեւազալին յորդորակները կը ստեղծուին ԺԶ. դարուն եւ կը բարդուին Շնորհալույն երգոց վրայ»: Սա դեռեւս քննելի եւ պարզելի է:

Հայաստանում միջին դարերում կենցաղավարժ նուազարանների պատմական զարգացման եւ տեսական հարցերի ուսումնասիրությունը անցեալում դէմ էր առնում մի կարեւոր խնդրի: Պարզ էր պաշտօնական եկեղեցու վերաբերմունքը դէպի նուազարանները: Այն լուսաբանեց Հ. Վ. Հացունին⁵⁶, «Բազմավէպ»ում հրատարակուած երկու յօդուածներում⁵⁷ ցոյց տալով, որ նուազարաններն առհասարակ չեն հալածուել հայ եկեղեցու կողմից, եւ որ Դ. դարում Ներսէս Մեծի խիստ ելոյթները նուազարանների կիրառութեան դէմ, մասնաւորապէս՝ հեթանոս վայրի սովորություններին կապուած յուղարկաւորությունների ընթացքում, ներկայացնում են բոլորովին մէկուսի մի երեւոյթ:

Դրանով, հայ իրականութեան մէջ նուազարանների կենցաղավարման եւ պատմական զարգացման խնդիրները առարկայական պայմանների հաշուառմամբ քննելու դռներ էին բացուում: Մասնաւոր, որ Հայր Հացունին հնախօսութեան մէջ էր որոնում նաեւ վերոյիշեալ հարցի լուծումը, մեզ եւս ցուցանելով հետազօտութեան ճիշտ ճամբան:

Հայ երաժշտութեան ձայնեղանակների հարցը սերտ կապուած է հնախորդ խնդրին: Հ. Վ. Հացունու առաջ բերած ու յաւելեալ փաստերից յայտնի է լինում, որ նուազարանները կիրառուում էին նաեւ միջնադարեան Հայաստանի վանքերում, ինչպէս տեսական խնդիրների լուծման, նոյնպէս եւ ծանր տիպի նոր, բարդ ստեղծագործութիւնների յղացման եւ սերտողութեան ընթացքում: Եւ դա յատուկ նշանակութիւն է ձեռք բերում երբ մտաբերում ենք, որ միջնադարում հայկական Ութ-ձայնի դրութիւնը իւրով հաստատագրուած է եղել նաեւ լարաւոր նուազարանների մատնատեղերում⁵⁸:

Այն, որ ձայնեղանակների համակարգը ընդհանուր էր հայ հոգեւոր եւ աշխարհիկ երաժշտութեան համար, պարզուած էր դեռեւս Կոմիտասի օրօք: Պարզ էր նաեւ, որ այդ համակարգն սկզբնապէս բիւրեղացել էր աշխարհիկ արուեստում: Բայց ե՞րբ էր ձեւաւորուել, մասնաւորապէս, Ութ-ձայնի դրութիւնը, որ յատուկ լինելով հայ եկեղեցական, աւելին՝ հիմնական սկզբունքներով՝ համաքրիստոնէական արուեստին եւս, իր կարգին ազդել էր աշխարհիկ երաժշտութեան վրայ:

Այս հարցը լուծուած է տակաւին միջազգային երաժշտագիտութեան մէջ իսկ: Մի ժամանակ ընդունուած կարծիքն այն էր, որ Ութ-ձայնն ընդհանրացել է Յովհան Դամասկացու ֆանքերով (Ը. դարում):

56ա. Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ, Հայ եկեղեցւոյ երգերն, «Բազմավէպ», 1987, 432:

- Տե՛ս նաեւ նոյնի՝ Եկեղեցական երաժշտութեան մասին, «Բազմավէպ», 1917, 207:

57. Հմտ. մեր յօդուածը՝ Նիւթրե հայկական միջնադարեան երաժշտական գործիքագիտութեան, «Բազմավէպ», 1991, 175-205:

58. Նոյն տեղում, էջ 196 եւ 198:

Յետոյ այն կապուեց Սեւերիոս Անտիոքացի պատրիարքի անուան (2. դ․)։ Հիմա մերժուած է դա եւս, ապահովաբար՝ աւելի հին փաստեր գտնելու յոյսով։ Այս պայմաններում, ազգային եւ համաքրիստոնէական Ութ-ձայնի պատմութեան լուսաբանութեան առումով հիմնական ուշադրութիւնը հարկ է սեւեռել հայոց հնագոյն, Ե․ դարի սկզբներում ձեւաւորուած Սաղմոսարան-Ժամագրքի վրայ։ Ինչպէս գիտենք, այն բաժանուած է եղել ութ կանոնների, որոնցից իւրաքանչիւրին յատկացուել է մէկ ձայնեղանակ։ Առաւել կարեւորն այն է, որ այդ ութամասն Սաղմոսարան-Ժամագրքն իր կազմութեամբ տարբերուելով թէ՛ ասորական եւ թէ՛ յունական նոյնանուն մատեաններից, ներկայացրել է ծիսական ինքնատիպ հայկական մի գիրք, ինչպէս ցոյց տուեց Հայր Հացունին, օգտուելով նաեւ «Բազմավէպ»ում հրատարակած իր յօդուածներից⁵⁹, եւ ինչպէս երեւում է Ժամագրքի ընդհանուր պատմութեան վերաբերող տուեալներից⁶⁰։

Դառնալով խաղաղիտութեան նուիրուած նիւթերին, ասենք, որ ստորեւ վերջիններին կ'անդրադառնանք ընդհանուրից դէպի մասնաւորը տանող կարգով, մի կողմ դնելով դրանց հրատարակութեան ժամանակագրական տուեալները։ Ըստ այժմ՝ նախ յիշատակենք «խաղերու գիտութիւնը», իր ժամանակի համար անկասկած շահեկան յօդուածը⁶¹։ Այն՝ տեղեկատու տիպի է, վերաբերում է Ֆէթէր Վակնէրի հրատարակած՝ համեմատական խաղաղիտութեան հարցերը լուսաբանող, եւ այժմ արդէն հանրայայտ, հեղինակաւոր հետազոտութեան⁶²։

«Որովհետեւ հայ խաղերու պատմութիւնը սերտ աղերս ունի բիւզանդական եւ այլ ազգաց խաղերու պատմութեան հետ, - իրաւացիօրէն գրում է յօդուածի հեղինակը, - աւելորդ չենք համարիր Փոռֆ․ Վակնէրի երկասիրութեան մի քանի գլուխները ծանօթացնել Բազմավէպի ընթերցողաց»։

Մասնաւորաբար հայկական խաղերի ուսումնասիրութեան հարցերին մասնագիտօրէն անդրադարձած հեղինակների եւ նրանց տեսութիւնների մասին բանիմաց ակնարկով հանդէս է եկել Հ․ Ղ․ Տայեանը⁶³։ Նա ամփոփ ներկայացնում է Գր․ Գապասաբայեանի, Ե․ Տնտեսեանի, Հ․ Իգն․ Կիրեղեանի, օտարներից՝ Տ․ Բոթիէի (D. Poithier), Վիլլոդոյի, Շրէօտէրի, Թիպոյի, եւ հուսկ՝ Կոմիտասի գաղափարները։

59. Հ․ Վ․ ՀԱՅՈՒՆԻ, Պատմութիւն հայոց աղօթամատոյցիմ, Վենետիկ, 1965, էջ 143-184։

60. S. BAUMER, *Histoire du Bréviare*, Paris, 1905.

61. «Բազմավէպ», 1912, 509։

62. WAGNER PETER, *Neumenkunde, Palaeographie des liturgischen gsranges*, Leipzig, Breitkopf und Haertel, 1912.

63. Հ․ Ղ․ ՏԱՅԵԱՆ, Հայկական խաղերում ուսումնասիրութիւնը մասնագէտներու կողմէ, «Բազմավէպ», 1933, 5։

Յիշատակուած գիտնականներէց «Բազմավէպ»-ում խազերին նը-
ւիրուած յատուկ, եւ ընդարձակ ուսումնասիրութիւն է հրատարակել
Հ. Իգն. Կիւրեղեանը⁶⁴։ Դրանում գիտնականը հայկական խազերի
վերծանութիւնը ջանում է կատարել, յենուելով լատինական նեմերի
(neuma) հետազոտութեան բնագաւառում ձեռք բերուած նուաճում-
ների վրայ։ Այդ նուաճումների լոյսի տակ քննելով իւրաքանչիւր
խազանշան, Հայր Կիւրեղեանն անում է օգտակար մի ամբողջ շարք
դիտողութիւններ, որոնց բազմիցս դիմել ենք, մասնաւորապէս, մենք
մեր ուսումնասիրութիւններում։

Պէտք է ասել, Հայր Կիւրեղեան չյանգեց խազագրերի դրութեան,
որպէս ամբողջական համակարգի, վերծանութեան ընդհանուր մեթոտի
տեսական իմաստաւորման։ Գիտնականը նաեւ առիթ չունեցաւ բացա-
յայտելու հայ-լատինական համեմատական խազագիտութեան բոլոր
եզրերը։ Եւ սակայն, սկզբունքօրէն շօշափելով երեւոյթը, նա ճամբայ
հարթեց այդ ուղղութեամբ մտածելու եւ հասնելու նոր արդիւնքների։

Մեր դիտումների համաձայն, հիմնախազերի շարքում կարճալ-
ների եւ տրոպաների իւրատեսակ ընտանիքներ գոյացնող երկու նշանա-
խումբեր կան, որոնցում ընդգրկուած են բարդ խազագրեր։ Համեմա-
տութիւնը ցոյց է տալիս^{64ա}, որ դրանք, մանաւանդ իրենց կրկնապատ-
կումներով, եռապատկումներով եւայլն, ինչպէս եւ ուրիշ նշանների
հետ զուգորդուած ձեւերի մէջ, արտայայտում են, մի դէպքում՝ երգե-
ցողութեան ընթացքում կատարուելիք յանկարծաբանական (improvisa-
tional) գեղեզեղանքներ, միւսում՝ մեղեդիական զարդոլորուն կազմաւո-
րումներ։ Վերջիններս պատմական զարգացման ընթացքում տիպակա-
նանալով, ձեռք են բերել, ելեւէջային եւ կշռութային կառուցուածքի
տեսակէտով, կայուն շրջագծեր⁶⁵։ Ի տարբերութիւն ուրիշ շատ ձայն-

64. Տե՛ս Հ. Իգն. Կիւրեղեան, Լուսաբանութիւն խազից եւ երգեցողութեան շարակա-
նաց, «Բազմավէպ», 1900, 49, 159, 259, 418, 460, 546... (եւ 1901ի եւ 1902ի վրա-
յով), 1903, 315, 1904, 128։

Հազիւ սկսած իր յօդուածաշարի հրապարակումը, Հայր Կիւրեղեան, ծանօթանալով
Վիլլոդիյի տպագրած բազմահատոր երկասիրութեան 14րդ հատորում գետնողուած
շահեկան գրութեան հայ երաժշտութեան եւ խազերի մասին (հմտ. G. A. VILLO-
TEAU, Description de l'Egypte, t 14^{ème}, Paris, 1826), առաջ է բերում դրա համաո-
տութիւնը եւ ապա շարունակում սեփական դրոյթների շարադրանքը։

64ա. Համեմատութեան համար օգտագործել ենք, ինչպէս մեր միւս բոլոր խազագիտա-
կան յօդուածներում, գլխաւորապէս՝ Մաշտոցի անուան Մատենադարանի Թ. 1576
գրչագիր շարակնոց (Դրազարկ, 1326 թ.), եւ Զայնազրեալ Շարականը (Վաղարշա-
պատ, 1875)։

65. Գրեթէ նոյն է պարագան բիւզանդական նեմագրութեան մէջ եւս։

Այստեղ մեղեդիական զարդոլորուն կազմաւորումները նոյնիսկ միտում ունեն
կապուելու ձայնակայքային համակարգի (tonal system) որոշակի կէտերին։
Հմտ.՝ ABRAHAM G., Consise Oxford history of music, London, Oxford University
Press, New York Melbourne, 1979, թ. 64, որտեղ հեղինակը մէջբերում է կատարում
բիւզանդական միջնադարեան երաժշտութեան հմուտ մասնագէտ Օլ. Շթրանգի

եղանակային (modal) տիպական (բանաձևային) պտոյտների, որոնք նոյն առումով չարժուճակ են (փոխում են ըստ կապակցութեան):

Յիշեալ նշանախմբերն են⁶⁶.

Բենկորճայ		Քմատրոպ	
Էկորճայ		Առանձնատրոպ	
Զակորճայ		Ծանրատրոպ	
Մենկորճայ		Թագատրոպ	

Տեսնում ենք՝ երկու խմբերում էլ նշանների անուանակոչութիւնները բաղկացած են երկուական բաղադրիչ ունեցող բարդ խօսքերից: Դրանցում առաջին բաղադրիչները տեսակաւորող զօրութիւն ունեն, երկրորդները՝ արմատական հասկացութիւններ են, որոնք, մեր որոնումների շնորհիւ, այսօր, հասկանալի են դառնում, որպէս, համապատասխանաբար, լատին-իտալական եւ յունա-լատինական եզրերի հայացուած ձեւեր:

Առաջին խմբում տեսակաւորող խօսքերը (Բեն, Զա եւայլն), նշանների արտաբերիչ շրջագծերի տառաձեւ լինելու հանգամանքներն են պարզում: Իսկ կորնայ արմատական հասկացութիւնը լատինէրէն Gorgia եզրի հայացումն է, որ նշանակում է՝ բնոյթով յանկարծաբանական զարդարուն գեղգեղանքներ կատարել երգեցողութեան ընթացքում⁶⁷:

(OLIVER STRUNK) «Բիզանդական երաժշտութեան ձայնակայքային համակարգը» աշխատութիւնից (The tonal system of Byzantine music).

66. Հմմտ. նաեւ մեր յօդուածը՝ *Le système des xaz (neumes) arméniens et l'art médiéval du chant*, Revue des études Arméniennes, tome XXII, Paris, 1990-1991, p. 351-367.

67. *Terminorum musica index, septem linguis redactus*, Akademiai Kiado Budapest, Bärenreiter Kassel. Basel. Tours, London, 1978, p. 234.

Gorgiaն կիրառուել է խոր միջնադարից եւ առանձնապէս տարածուել է ԺԶ. հարկւրամեակում:

Իտալերէնում կայ նաեւ Gorgiaին ազգակից աւելի նոր մի եզր՝ Gorgheggio. իտալական հանրագիտարանում կարդում ենք.

Gorgheggio (cfr. gorga gola dal lat. gurgus gorgo; fr. ted. ingl. roulade; sp. gorgorito). - Rapido passaggio di suoni eseguito dalla voce sopra una stessa sillaba. Richiede grande flessibilità delle corde vocali e una sicura agilità. եւայլն:

Տե՛ս *Enciclopedia italiana di scienze, lettere ed arti*, Milano, 1933, vol. XVII, p. 550.

Վերոյիշեալ անցումները (passaggio), բուն միջնադարում այնքան էլ արագ չէ, որ կատարուել են:

Երկրորդ խմբում տեսակաւորող խօսքերը աւելի էական պարագաներ են մատնանշում (քմա... քիմք-ից, ծանրա... ծանր-ից եւ այլն)⁶⁸։ Իսկ տրոպ արմատական հասկացութիւնը յունա-լատինական trope, tropos, այլեւ tropus խօսքի հայացուած ձեւն է, եւ նշանակում է եղանակ, մեղեդիական զարդոյրուն, յարաբերականօրէն աւարտուած կազմաւորում⁶⁹։

Ուղագրութեան եւ հոգեւոր երգերի կատարման բնագաւառում հայ-լատինական կապերի զանազան կողմերի լուսաբանութեան խընդիրը դեռեւս կարօտ է լրացուցիչ հետազոտութեան։ Անկախ դրանից, Հայր Կիրեղեանի կատարած ուսումնասիրութիւնը, ընդհանուր առմամբ, այսօր էլ պահում է իր այժմէականութիւնը։

Իսկ «Բազմավէպ»ը, որն իր էջերը սիրով ու հասկացողութեամբ տրամադրել է այդ եւ նման յօդուածներին, վեր է ամէն տեսակ դրուատանքից։ Եւ այս օրերին, 150ամեայ պանծալի յոբելեանի առթիւ, ամսագրի, դրա վաստակաշատ խմբագիրների եւ առհասարակ աշխատակիցների նկատմամբ մենք համակում ենք խորին շնորհակալութեան ու երախտագիտութեան անկեղծ զգացումներով։

Թող աւելի եւս բարգաւաճի, ուրեմն, ազգակառոյց «Բազմավէպ»ը, ի փառս հայ գրականութեան եւ հայ արուեստի ու գիտութեան։

Լոս Անճելիս - Ա.Մ.Ն.

Փրոֆ. ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻՋԵԱՆ

68. Այդ չորս խօսքերին յատուկ կ'անդրադառնանք յարմարագոյն առիթով։ Այստեղ նշենք միայն, որ դրանք պէտք է հասկանալ իրենց բառարանային իմաստին մօտիկ նշանակութեամբ։ Այս առումով իրաւացի է էմ. Քալունին, որ խաղագրերի անուանակոչութիւններից քմազարդը՝ *fantasie*, այսինքն՝ ըստ քմաց զարդ է թարգմանում։ Տե՛ս նրա՝ Համառոտ բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, Վենետիկ, 1892, էջ 128։

69. Tropeները (ինչպէս եւ sequenceները) միջին դարերում աւելացում էին լատինական պաշտօններգութեան տարբեր կտորների, եւ, ի մասնաւորի, ալէլուների վրայ, եւ կամ, աւելի ճիշտ, ներդրում էին դրանց մէջ։ Սկզբնապէս, դրանց վերջնապաշանձեւերում, յետագայում՝ նաեւ կիսապանգաձեւերում, ու ի վերջոյ՝ աւելի ազատօրէն եւս։

Հմտ.՝ *The New Harvard Dictionary of music*, edited by DON MICHAEL RANDEL, the Belknap press of Harvard University Press Combridge, Massachusetts London, England, printed in the United States of America, 1986.